

Տ. ԳԻՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ծնվել է 1951 թ. Հալեպում (Սիրիա): Հաջորդ տարի ծնողների հետ տեղափոխվել է Կամիշլի, ուր ստացել է իր նախնական կրթությունը:

1963 թ. ընդունվել է Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքի ժառանգավորաց վարժարան և 1971 թ. հուլիսի 25-ին, երջանկահիշատակ Տ. Եղիշե Պատրիարքի ձեռամբ, կուսակրոն քահանա ձեռնադրվել:

1975 թ. մեկնել է Արգենտինա՝ Բուենոս Այրես, իբրև հոգևոր հովիվ: Միևնույն ժամանակ վարել է ուսուցչական պաշտոններ Ս. Գրիգոր Լուսավորչի «Արսլանյան» կրթական հաստատությունում, որի փոխտեսուչն է եղել ավելի քան տասը տարի: Այնուհետև Վիսենթե Լոպեսի ազգային և Դերձակյան երկրորդական վարժարաններում դասավանդել է հայոց լեզու, հայ ժողովրդի պատմություն և կրոնա-եկեղեցական առարկաներ:

1987 թ. հաջողությամբ ավարտել է Բուենոս Այրեսի Քենեդիի անվան համալսարանի լրագրական բաժինը: Որոշ շրջան վարել է արգենտինահայ թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնը, իսկ 1990 թ. հունիսից ընտրվել է առաջնորդական տեղապահ:

1990 թ. հոկտեմբերի 7-ին, Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի, ձեռնադրվել է եպիսկոպոս: